



**ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ**



**OPEN SOCIETY  
FOUNDATIONS**

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**2020 ԹՎԱԿԱՆԻՆ**

**ՀՀ ԵՎ ԱՅ /ԼՂ/ ՁԻՆՎԱՅ ՈՒԺԵՐՈՒՄ  
ՄԱՅԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՎԱՆԱԶՈՐ**

**2021**

Ջեդիսակներ՝ Արմինե Սադիկյան  
Նազելի Մովսեսյան  
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

## ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության /Լեռնային Ղարաբաղի/ զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ հերթական Տեղեկանքը 2020 թվականի վերաբերյալ: Տվյալները հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված տեղեկություններից, ինչպես նաև Կազմակերպության կողմից պաշտոնական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխաններից:

2020 թվականը Էական տարբերություն ունեցավ Կազմակերպության կողմից սկսած 2010 թ-ից դիտարկված նախորդ բոլոր տարիների համեմատ համակարգային երկու սպառնալիքների կամ մարտահրավերների պատճառով: Առաջինը 2020 թ. մարտի սկզբից տարածված COVID-19 համավարակն էր, որը չէր կարող ազդեցություն չունենալ զինվորական ծառայության և զորակոչի կազմակերպման աշխատանքների վրա: Երկրորդ գլխավոր սպառնալիքը 2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի անթաքույց և անմիջական աջակցությամբ, նաև վարձու ահաբեկիչների ներգրավմամբ Ադրբեյջանի սանձազերծած ագրեսիան էր Արցախի նկատմամբ, որն անդամալի հետևանքներ ունեցավ զինված ուժերի և պաշտպանական համակարգի վրա:

Հաշվի առնելով նշված երկու հիմնարար սպառնալիքները՝ 2020թ. վերաբերյալ ներկայացվող Տեղեկանքում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի երկու դասակարգմամբ՝

❖ **պատերազմական գործողությունների հետևանքով մահվան դեպքեր և**

❖ **պատերազմական գործողությունների հետ անմիջական կապ չունեցող մահվան դեպքեր:**

Պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերը կներկայացվեն միայն մինչ 2021 թ. ապրիլի 16-ը ԱՀ/ԼՂ ՊՆ կողմից հրապարակված և զանգվածային լրատվամիջոցներով տարածված տեղեկատվության ամփոփման հիման վրա, քանի որ Կազմակերպությունը դեռևս պաշտոնապես չի ստացել վիճակագրական տվյալներ:

Նշենք, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի թիվն, ըստ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից ի պատասխան 2021 թ. փետրվարի 15-ին Կազմակերպության հարցմանը, դեռևս հստակ չէ:

## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԱՅԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Հարկ է նշել, որ պատերազմի հետևանքով գոհերի վերջնական թիվն այս պահի դրությամբ հայտնի չէ: Մասնավորապես՝ *Կազմակերպության 2020 թ. հունվարի 8-ի հարցմանն ի պատասխան ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունը իր՝ հունվարի 19-ի պատասխանում տեղեկացնում է. «պատերազմական գործողությունների հետևանքով զոհված զինծառայողների վերաբերյալ ներկայումս տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ, քանի որ դրանք ամբողջական չեն, պարբերաբար լրացվում են, և այդ կապակցությամբ հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է»:*

**2021 թ. ապրիլի 16-ի դրությամբ ԱՅ/ԼՂ ՊՆ կողմից հրապարակվել է 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում պատերազմի հետևանքով զոհված 3015 զինծառայողի անուն:**

Լրատվամիջոցներից մեկի<sup>1</sup> հարցմանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ 2021 թ. մարտի 31-ի դրությամբ **հաշվառվել է 3049 զոհված զինծառայող և մարտական գործողություններին կամավոր հիմունքներով մասնակցած քաղաքացիական անձ:** Նշենք, որ նույն լրատվամիջոցի կողմից ՀՀ առողջապահության նախարարությանն ուղարկված հարցմանն ի պատասխան տեղեկացվել է, որ կատարվել է **3723 դիակի և մասունքի դատաբժշկական փորձաքննություն:** Տեղեկացվել է նաև, որ **ևս 238 մարմնի և մասունքի փորձանմուշ գտնվում է ԴՆԹ փորձաքննության փուլում:** Սակայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հստակեցվել է, որ տարբեր մասունքներ կարող են պատկանել նույն անձին: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ԴՆԹ հետազոտումից ծնողները հրաժարվում են հիմնավորմամբ, որ ակնհայտորեն ճանաչում են իրենց զոհված հարազատին:

Այսպիսով, հաշվի առնելով նշված հանգամանքները՝ կարող ենք պնդել, որ **դիակների և մասունքների նմուշների ԴՆԹ փորձաքննությունների հրապարակված 3723 թիվը չի ներկայացնում զոհվածների թիվը:**

Նշենք, որ դեռևս 2021 թ. հունվարին ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը Ազգային ժողովում հայտարարել էր, որ գոհերի թիվը չի անցնի 4000-ից <sup>2</sup>:

Ապրիլի 14-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովում հայտարարեց 3621 գոհի մասին և 321 անհայտ կորած անձանց մասին<sup>3</sup>:

**Չնայած պատերազմի սկզբից ի վեր պաշտոնապես՝ ԱՅ/ԼՂ ՊՆ կողմից պարբերաբար հրապարակվել են գոհերի անունները, այնուամենայնիվ, մինչ օրս պաշտոնապես հրապարակված չեն բոլոր զոհվածների անունները:**

Նշենք, որ պաշտոնական հրապարակումներում երբեմն տեղ են գտել այնպիսի դեպքեր, երբ արդեն իսկ հրապարակված ցուցակներից որոշ ժամանակ անց հանվել են

<sup>1</sup> <https://armeniasputnik.am/armenia/20210405/27062450/pn-n-zoheri-tiv-e-tramdrel-pashinyani-haytnats-tyvalneri-het-dranq-chen-hamapataxanum.html>

<sup>2</sup> <https://www.youtube.com/watch?v=PCq8fR00hUU>

<sup>3</sup> <https://hetq.am/hy/article/129672>

զինծառայողների անուկներ: Պաշտոնապես չի ներկայացվել տվյալ անձանց անուկները զոհվածներից ցուցակից հանելու մասին: Արձանագրվել է այդպիսի **14 դեպք**, որոնք ներառված չեն սույն Տեղեկանքում ներկայացված դեպքերի ընդհանուր թվի մեջ:

**Եվս 12 զինծառայողների մահվան** մասին ԱՅ/ԼՂ ՊՆ հրապարակումները պաշտոնապես հերքվել են հրապարակվելուց հետո, քանի որ վերջիններս կամ ողջ են հայտնաբերվել կամ ճշտված չի եղել նրանց զոհվելու մասին տեղեկատվությունը: Նշված դեպքերը ևս ներառված չեն սույն Տեղեկանքում:

Կան նաև դեպքեր, երբ զոհվածների հրապարակված ցուցակներում կրկնվել են զինծառայողների անուկները, որոնք հանրակրթական կենտրոններում են և՛ վերջիններիս հայրանվամբ, և՛ ծննդյան թվով: Արձանագրվել է այդպիսի **31 դեպք**: Քանի որ հավանական են համընկնումներ անձանց անուկներում, Կազմակերպության կողմից նշված դեպքերն առայժմ հաշվարկվել են որպես առանձին անձինք:

Նշենք նաև, որ պատերազմի հետևանքով զոհերի ցուցակում հրապարակվել են անձանց անուկներ, որոնք Դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալների համաձայն մահացել են ոչ պատերազմական գործողությունների հետևանքով: Արձանագրվել է մահվան նման **14 դեպք**, որից 9-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով են, 3-ը՝ ավտովթարի, 1-ական դեպքեր՝ ինքնասպանության և սպանության հետևանքով: Նշված դեպքերը Կազմակերպության կողմից ներառվել են *պատերազմի հետ անմիջական կապ չունեցող դեպքերի* թվում:

Հարկ է նշել, որ 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորածների վերաբերյալ տվյալները հավաքագրելիս ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի են դարձել ևս **47** զինծառայողների անուկներ, ում հարազատները հայտնել են վերջիններիս զոհվելու մասին, սակայն ում անուկները դեռևս պաշտոնապես հրապարակված չեն:

Եվս **104** մահացած զինծառայողի անուկներ հրապարակվել է զանգվածային լրատվամիջոցներով, որոնց մասին ևս պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

Այսպիսով, զոհված **151 զինծառայողի** անուկները դեռևս պաշտոնապես չեն հրապարակվել:

**Այսպիսով, համադրելով Կազմակերպությանն այս պահին հայտնի դեպքերի թիվը պաշտոնապես հրապարակված տվյալների հետ՝ կարող ենք արձանագրել 2020թ սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ի ժամանակահատվածում պատերազմական գործողություններից մահացած 3166 անձանց մասին:**

**Եթե համեմատենք ԱՅ/ԼՂ ՊՆ կողմից հրապարակված (3015), միայն լրատվամիջոցներով հրապարակված (104) և ՀՔԱ Վանաձորի գրասենյակին դիմած անձանց (47) տվյալներով զոհվածների թիվը ՀՀ վարչապետի կողմից հնչեցված թվի (3621) հետ, կարող ենք փաստել, որ այս պահին 455 զոհվածների անուկներ դեռևս չեն հրապարակվել ոչ պաշտոնապես, ոչ լրատվամիջոցներով:**

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2021 թ. ապրիլի 16-ի դրությամբ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի, պաշտոնական և ոչ պաշտոնական՝ ՉԼՄ տվյալներով, ըստ առանձին անուկների հրապարակված զոհերի թիվը:

**Աղյուսակ 1. 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով զոհերի թիվը**

<b>Պաշտոնապես /ըստ անուկների հրապարակված մահվան դեպքերի թիվը</b>	<b>ՀՔԱՎ կողմից արձանագրված/ չհրապարակված դեպքերի թիվը</b>	<b>ՉԼՄ կողմից արձանագրված/ պաշտոնապես չհրապարակված դեպքերի թիվը</b>	<b>ՀՀ վարչապետի կոմիտեից հրապարակված տվյալ /2021 թ. ապրիլի 14-ի դրությամբ/</b>
3015	47	104	3621
3166			3621

## **ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՊ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՅԿԱՆ ԴԵՊՔԵՐ**

ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2020 թ-ին գրանցվել է 2020թ սպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը ժամանակահատվածում պատերազմական գործողություններով չպայմանավորված 100 զինծառայողի մահվան ելքով դեպք:

Նշված 100 դեպքերից

- **25-ը` առողջական խնդիրների** հետևանքով են,
- **22-ը` ավտովթարի,**
- **18-ը` ինքնասպանության կամ ինքնասպանության**

**հասցնելու,**

- **17-ը` հրադադարի ռեժիմի խախտման,**
- **9-ը` դժբախտ պատահարի** (3-ը` ձևահյուսի, 1-ը` ձորն ընկնելու, 1-ը` մեքենայում բռնկված հրդեհի, 1-ը` տրակտորի շրջվելու, 1-ը` մեղվի խայթոցի, 1-ը` էթիլ սպիրտով թունավորման, 1-ը` տանը շինարարական աշխատանքների ժամանակ տեղի ունեցած փլուզման հետևանքով),

• **4-ը` սպանության** (2-ը` դիտավորյալ, 1-ը` խուլիգանական դրդումներով սպանության, 1-ը` այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանության),

- **3-ը` զենքի օգտագործման կանոնների խախտման,**

- **1-ը` մարտական հերթապահություն/ ծառայություն կրելու**

**կանոնների խախտման**

- **1-ը` ականի պայթյունի:**

2019 թ-ին գրանցվել է **50 զինծառայողի մահվան դեպք** (տե՛ս աղյուսակ 2), որից

- **16-ը` ավտովթարի** հետևանքով,
- **13-ը` առողջական խնդիրների,**
- **10-ը` ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու,**
- **5-ը` սպանության** (2-ը` դիտավորյալ, 1-ը` ծառայակցի կողմից զենքի

հետ վարվելու կանոնների խախտման, 2-ը` երկու կամ ավելի անձանց սպանության փորձի),

- **4-ը` հրադադարի ռեժիմի խախտման,**

- **2-ը` դժբախտ պատահարի** (1-ը` ձորն ընկնելու, 1-ը` մեքենան նորոգելիս տեղի ունեցած պատահարի):

Աղյուսակ 2-ում ներկայացվում են ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2019 և 2020 թթ. զինծառայողների մահացության դեպքերն ըստ պատճառների և ամիսների:

**Աղյուսակ 2. ԶՅ և ԱՅ/ԼԴ զինված ուժերում 2019 և 2020 թթ. զինծառայողների մահացության դեպքերի պատճառներն ըստ ամիսների**

Ամիս	Մարտական								Ոչ մարտական													Ընդամենը																
	Չրադրարի նեժիմի խախտում	Ինքնասպանություն/ինքնասպանության հասցնել		Առողջական խնդիրներ		Ավտոկթար		Սպանություն					Ականի պայթյուն	Մարտ. հերթ. կր. կան. խախտ.	204	Դժբախտ պատահար																						
		Խուլիզանական դրդումներով	204	Երկու կամ ավելի անձանց սպանության փորձ	Այլ հանցանքը թաքցնելու կամ դրական առարկայում հեշտացնելու նպատակով	Դիտավորյալ	Մեք. նորոգելիս մեքենայի էլեկտրոնային համակարգի փոխարինում	Ընկերության գործունեության ընթացքում	Ձնաշյուռ	Տրակտորի շրջվել	Չրդեհմենայում	Մեղվի խայթոց				Չհասցրված	Չհասցրված	Չհասցրված	Չհասցրված	Չհասցրված																		
	200199	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	
	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009
2019	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009
2020	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009	2009





2020 թ. մահացության 100 դեպքից միայն 44-ի մասին է տարածվել պաշտոնական հաղորդագրություն, մյուս 56 դեպքերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:


Նշված 56 դեպքերից

- ❖ **24-ի** մասին առաջնային տեղեկատվությունը տարածվել է զանգվածային լրատվամիջոցներով (որոնցից 13-ի մասին լրատվամիջոցը հղում է կատարել պաշտոնական աղբյուրից ստացված իր հարցման պատասխանին),
- ❖ մյուս 32 դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը և ՀՀ քննչական կոմիտեին ուղարկված տեղեկատվության հարցումների պատասխաններից:

Ընդ որում, պաշտոնապես չհրապարակված 56 դեպքերի թվում կան և՛ ծառայության հետ կապված (13), և՛ չկապված (42) մահվան դեպքեր, ինչպես նաև 1 դեպք (ինքնասպանություն որակված), որի մասին հայտնի չէ՝ թե արդյոք այն կապված է զինծառայության հետ, թե ոչ:

**Կարելի է արձանագրել, որ պաշտոնական մարմինները շարունակում են զինված ուժերում մահացության դեպքերի վերաբերյալ նույնիսկ այն դեպքերում տեղեկություն չտրամադրել, երբ, ըստ իրենց գնահատման, դեպքերը կապված են զինվորական ծառայության հետ:**

Գծապատկեր 1. 2019 և 2020 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերն ըստ պատճառների





Չամբմատելով 2019 և 2020 թվականներին գրանցված մահվան դեպքերը և պատճառները՝ արձանագրում ենք, որ

- 2019 թ. մարտական պայմաններում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով գրանցվել է 4 դեպք, որը կազմում է մահացության դեպքերի ընդհանուր թվի 8 %-ը, իսկ ոչ մարտական պայմաններում՝ 46 դեպք՝ 92%-ը: Ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի 35 %-ը ավտովթարի հետևանքով է, 28 %-ը՝ առողջական խնդիրներ, 22%-ը՝ ինքնասպանության, 11 %-ը՝ սպանության, 4 %-ը՝ դժբախտ պատահարի:
- 2020 թ. մարտական պայմաններում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով գրանցվել է 17 դեպք, իսկ ոչ մարտական պայմաններում՝ 83 դեպք:  
Ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի 30 %-ը առողջական խնդիրների հետևանքով է, 27 %-ը՝ ավտովթարի, 22 %-ը՝ ինքնասպանության, 11 %-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով, 5 %-ը՝ սպանության, 4 %-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 1%-ը՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման, 1 %-ը՝ ականի պայթյունի հետևանքով:

Այսպիսով՝ 2019 թվականի համեմատ 2020 թվականին

- **13-ով ավելացել են հրադադարի հետևանքով մահացության դեպքերը (2019 թ.՝ 4 դեպք),**
- **գրեթե կրկնակի անգամ՝ 8-ով, ավելացել են ինքնասպանության հետևանքով մահացության դեպքերը (2019 թ.՝ 10 դեպք),**
- **12-ով ավելացել են առողջական խնդիրների հետևանքով մահացության դեպքերը (2019 թ.՝ 13 դեպք),**
- **7-ով ավելացել են դժբախտ պատահարների հետևանքով մահացության դեպքերը (2019 թ.՝ 2 դեպք),**
- **6-ով ավելացել են ավտովթարի հետևանքով մահվան դեպքերը (2019 թ.՝ 16 դեպք):**

### ***Ինքնասպանություն և սպանություն***

Դիտարկելով 2019 թ. **ինքնասպանության (10) և սպանության (5) հետևանքով զինծառայողների մահացության դեպքերը՝** կարող ենք արձանագրել, որ նշված երկու պատճառով դեպքերը կազմում են ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի ընդհանուր թվի համապատասխանաբար 22 %-ը և 11 %-ը: Իսկ 2020 թ. **ինքնասպանության (18) և սպանության (4)** հետևանքով մահացության դեպքերը կազմում են ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի համապատասխանաբար 22 %-ը և 5%-ը:

Չատկանշական է, որ 2020 թ. **ինքնասպանության 18 դեպքից 8-ը և սպանության 4 դեպքերից 2-ը արձանագրվել է պատերազմական գործողությունների ընթացքում կամ դրա ավարտից ընդամենը մեկ կամ մեկ ու կես ամիս անց:**

Ինքնասպանության և սպանության դեպքերը հիմնականում զինծառայողների միջև կանոնադրային հարաբերությունների խախտումների հետևանք են, և հետևաբար դեռևս չլուծված և խիստ մտահոգիչ է մնում զինվորական կարգապահության պահպանման հետ կապված խնդիրների ատկայությունը: Բացի այդ, զինված ուժերում ինքնասպանության և սպանության դեպքերի շարունակականությունը վկայում է այն մասին, որ նմանատիպ դեպքերով կամ չի իրականացվում պատշաճ ծառայողական քննություն, կամ դրանց արդյունքում բացահայտված և արձանագրված խնդիրների կանխման, վերացման կամ լուծման ուղղությամբ քայլերը դեռևս արդյունավետ չեն:

### ***Յրադադարի ռեժիմի խախտում***

Ինչ վերաբերում է **հրադադարի** հետևանքով մահացության դեպքերին, սպա նշենք, որ դրանց գրեթե կեսը (17-ից 8-ը) տեղի է ունեցել մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների սկիզբը, որից միայն 6-ը տեղի են ունեցել 2020 թ. հուլիսին Չալստանի և Ադրբեջանի շփման գծում ծավալված մարտական գործողությունների ընթացքում: **Եվս 9 դեպք արձանագրվել է 2020 թ. դեկտեմբերին՝ այսինքն Չալստանի Չանրապետության, Ադրբեջանի Չանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների միջև նոյեմբերի 10-ին հրադադարի հաստատման համաձայնագրի կնքումից հետո:**

### ***Ծառայության անվտանգության կանոնների պահպանում***

Ծառայության անվտանգության կանոնների պահպանմանն անդրադառնալիս հարկ է նշել, որ 2020 թ. ականի պայթյունի հետևանքով տեղի է ունեցել մահացության 1 դեպք: Ընդ որում մահացողը հանդիսանում է սպա, ինչն առավել մտահոգիչ է՝ հաշվի առնելով սպայական անձնակազմի պատրաստվածության մակարդակի և զինվորական ծառայության կազմակերպման գործում սպաների կողմից անվտանգության բոլոր կանոնների պահպանման պարտավորությունը:

### ***Առողջական խնդիրներ***

2020 թ. **առողջական խնդիրների հետևանքով** արձանագրվել է զինծառայողների մահացության 25 դեպք, որը կազմում է ոչ մարտական պայմաններում մահացության դեպքերի թվի 30 %-ը: Դեպքերից 5-ը պաշտոնապես (ՀՀ գլխավոր դատախազության կողմից) համարվել են զինվորական ծառայության հետ կապված, 20-ը՝ չկապված: Ընդ որում, զինվորական ծառայության հետ **կապված** են համարվել **3 պարտադիր ժամկետային** զինծառայողների և **2 պայմանագրային** զինծառայողների մահացության դեպքերը, իսկ **չկապված՝ 10 պայմանագրային** զինծառայողների, **8 սպաների, 1 պահեստագորայինի** և **1 ենթասպայի** մահացության դեպքերը:

**Ինչպես վիճակագրությունն է ցույց տալիս, առողջական խնդիրների հետևանքով մահացությունները նույնպես բավական մտահոգիչ են, նույնիսկ եթե դրանք պաշտոնապես համարվում են ծառայության հետ չկապված:** «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը<sup>4</sup>

<sup>4</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121817>

սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,
- զինծառայողների բուժզննում,
- զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

Յոդված 345-ը մասնավորեցնում է բոլոր խմբերը, որոնք ենթարկվում են բուժզննության կոնկրետ դեպքերում:

***Յետևաբար հարց է առաջանում՝ արդյոք այս բոլոր միջոցառումները պատշաճ կերպով իրականացվում են, թե ոչ: Վիճակագրական տվյալները հիմք են տալիս պնդելու, որ զինծառայողների խորացված և հսկիչ կամ կանխարգելիչ զննությունը պատշաճ չի իրականացվում, որի ապահովման դեպքում կարող են կանխվել այդ պատճառով մահացության դեպքերը:***

***Նշենք, որ առողջական խնդիրների հետևանքով մահացության դեպքերի թիվը 2020 թ.-ին աննախադեպ է, քանի որ վերջին 10 տարիների ընթացքում առողջական խնդիրների պատճառով մահացության դեպքերի առավելագույն թիվը եղել է 13՝ 2018 և 2019 թվականներին:***

*Անդրադառնալով զինծառայողների առողջական վիճակի հետ կապված խնդիրներին՝ ՀՀ-ում կորոնավիրուսային համավարակով (covid-19) պայմանավորված իրավիճակին եւ վիրուսի հետեւանքով զինծառայողների մահացության դեպքերին՝ Կազմակերպությանը լրատվամիջոցների ուսումնասիրությունից հայտնի է դարձել համավարակի հետևանքով զինծառայողների մահացության ընդամենը 3 դեպքի մասին, սակայն 2021 թ-ի մարտի 28-ին ՀՀ ՁՈԻ ռազմաբժշկական վարչության պետ, գնդապետ Սահակ Օհանյանը լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ **զինված ուժերում գրանցվել է կորոնավիրուսից մահվան 10 դեպք:***

Ի դեպ, 2020 թ. հուլիսի 27-ին Կազմակերպությունը դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարություն տեղեկատվական հարցումով կորոնավիրուսի հետևանքով մահացության դեպքերի ընդհանուր թվի վերաբերյալ: ՀՀ ՊՆ մերժել էր տեղեկատվության տրամադրումը, հղում կատարելով «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետին և ՀՀ ՊՆ 09.07.2015 թ. N 9-Ն հրամանով հաստատված ցանկի 10 (Տեղեկություններ կապի և ԱԿՀ անվտանգության ապահովման միջոցառումների և վիճակի մասին), 17 (Պատերազմի ժամանակահատվածում զորամիավորումների, միավորումների, զորամասերի ցանկ) և 20 (Տեղեկություններ սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութատեխնիկական միջոցների զորահավաքային հզորությունների կամ դրանց ստեղծման վերաբերյալ) բաժինների պահանջներին՝ գտնելով, որ նշված հիմքերով պահանջվող տեղեկությունը պարունակում է պետական և ծառայողական գաղտնիք:

Այս մոտեցումը անհասկանալի է եւ չի բխում ժողովրդավարական պետությանը բնորոշ հաշվետվողականության եւ թափանցիկության սկզբունքներից, ինչպես նաև կառավարման մարմնի վարքագծի կանխատեսելիության սկզբունքից, իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներից:

Նշենք, որ այս մասին վկայում է նաև այն փաստը, որ *առնվազն մեկ նման դեպքի վերաբերյալ տեղեկատվություն կազմակերպությանը տրամադրվել է ՀՀ դատախազության կողմից:*

### **Ավտովթար/ տեխնիկական պատճառներ**

2020 թ. **ավելացել են նաև ավտովթարի հետևանքով** մահացության դեպքերը՝ 22 դեպք, ի տարբերություն 2019 թ., երբ գրանցվել էր նմանատիպ 16 դեպք:

Նշենք, որ 2020 թ. ավտովթարի հետևանքով մահացության 22 դեպքերից 14-ը պաշտոնապես համարվել են զինվորական ծառայության հետ չկապված: Դրանցից 12-ն արձանագրվել են զինծառայողների վարած սեփական/քաղաքացիական մեքենաներով կամ որպես ուղևոր մեքենայում գտնվելու ժամանակ վթարի ենթարկվելու արդյունքում: 2 դեպքում հայտնի չէ, թե արդյոք զինծառայողները դեպքի պահին գտնվել են ՀՀ ՊՆ-ում հաշվառված, թե քաղաքացիական մեքենայում: Ավտովթարի հետևանքով մահվան **7 դեպք** համարվել է զինծառայության հետ կապված: Ընդ որում, 3 դեպքում զինծառայողների անունները ԱՅ/ԼՂ ՊՆ կողմից հրապարակվել են պատերազմական գործողությունների հետևանքով զոհված զինծառայողների ցուցակում: 1 դեպքում հայտնի չէ, թե ավտովթարի հետևանքով արձանագրված մահվան դեպքը կապված է զինծառայության հետ, թե ոչ: Դեպքի մասին կազմակերպությանը հայտնի է դարձել 2020 թ. առաջին կիսամյակում ՀՀ ՊՆ ուղղված հարցման պատասխանից, երբ ներկայացվել է միայն զինծառայողի անունը: Մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազության կողմից զինծառայողի մահվան վերաբերյալ տվյալը տրամադրվել է ռազմինֆո կայքի հացմանն ի պատասխան, սակայն չի տրամադրվել ՀՀԿ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան:

**Փաստորեն, 2020 թ. տեխնիկական պատճառներով արձանագրված մահացության դեպքերը կազմում են մահացության ընդհանուր թվի 22 %-ը, իսկ 2019 թ. այն կազմում է 30 %:**

2019 թ. զինծառայության հետ կապված է համարվել ավտովթարի հետևանքով 15 մահացության դեպքերից **1-ը**, չկապված՝ **14-ը:**

*Ինչ վերաբերում է **դժբախտ պատահարի** հետևանքով մահացության դեպքերին, ապա արձանագրենք, որ 2020 թ. դրանք կազմում են ընդհանուր դեպքերի 9 %-ը, իսկ 2019 թ.՝ 4 %-ը:*

Նշենք նաև, որ 2020 թ. դեպքերի մեծ մասը տեղի են ունեցել **դեկտեմբեր** ամսին՝ 21 դեպք: Ընդ որում նշված դեպքերի գերակշիռ մասը՝ 9 դեպք, տեղի են ունեցել պատերազմական դրությունից հետո կնքված հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով, 5 դեպք գրանցվել է ավտովթարի, 3 դեպք առողջական խնդիրների, և 2-ական

դեպքեր՝ ինքնասպանության և զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով: Մյուս ամիսներին գրանցվել են հետևյալ թվով դեպքեր՝ **փետրվար՝ 7 դեպք, օգոստոս և հոկտեմբեր՝ 12, հունիս և նոյեմբեր՝ 9, հուլիս և սեպտեմբեր՝ 7, հունվար՝ 6, մայիս՝ 5, մարտ՝ 3, ապրիլ՝ 2:**

Այսպիսով, մինչ պատերազմական գործողությունները գրանցվել է 58 զինծառայողի մահացության դեպք, որոնց գերակշիռ մասը առողջական խնդիրների հետևանքով՝ 18 դեպք:

2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում պատերազմական գործողությունների ընթացքում արձանագրվել է դրա հետ անմիջապես չկապված 16 դեպք, որոնց գերակշիռ մասը ավտովթարի հետևանքով՝ 7 դեպք:

Իսկ պատերազմական գործողությունների ավարտից հետո արձանագրվել է 25 զինծառայողի մահացության դեպք, որոնց գերակշիռ մասը ավտովթարի հետևանքով՝ 5 դեպք:

2020 թ-ին մահացած 100 զինծառայողներից 33-ը **պայմանագրային զինծառայողներ** են, 23-ը՝ **սպա**, 21-ը՝ **պարտադիր ժամկետային զինծառայողներ**, 17-ը՝ **պահեստագորային**, 4-ը՝ **ենթասպա**, 1-ը՝ **ավագ ենթասպա**, 1-ը՝ **կամավորական**:

2019 թ-ին մահացած 50 զինծառայողներից 19-ը **պայմանագրային ժամկետային զինծառայողներ** են, 15-ը՝ **պարտադիր ժամկետային**, 5-ը՝ **ենթասպա**, 4-ը՝ **սպա**, 7 **դեպքում ճշտված չէ** զինծառայության տեսակը:

***2ինծառայողների մահվան դեպքերի պատճառներն ըստ զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի***

Եթե մահվան դեպքերը դիտարկենք ըստ պատճառի և մահացած զինծառայողների ծառայության տեսակի, ապա կնկատենք, որ

**ժամկետային զինծառայողների շրջանում** մահացության պատճառներն են

- **ինքնասպանությունը** (7 դեպք),
- **առողջական խնդիրները** (3 դեպք),
- **ավտովթարը** (3 դեպք),
- **զենքի օգտագործման կանոնների խախտումը** (3 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (3 դեպք),
- **սպանությունը** (2 դեպք):

**Պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են**

- **առողջական խնդիրները** (11 դեպք),
- **ավտովթարը** (9 դեպք),
- **դժբախտ պատահարները** (7 դեպք),
- **ինքնասպանությունը** (5 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (1 դեպք):

**Սպաների** մահվան պատճառ են հանդիսացել

- **առողջական խնդիրները** (8 դեպք),
- **ավտովթարը** (6 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (4 դեպք),
- **դժբախտ պատահարը** (2 դեպք),



- **ինքնասպանությունը** (1 դեպք),
- **ականի պայթյունը** (1 դեպք),
- **սպանությունը** (1 դեպք):

**Պահեստազորայիներ**ի մահվան պատճառ են հանդիսացել

- **հրադադարի ռեժիմի խախտումը** (9 դեպք),
- **ինքնասպանությունը** (4 դեպք),
- **առողջական խնդիրները** (2 դեպք),
- **սպանությունը** (1 դեպք),
- **մարտական հերթապահություն/ ծառայություն կրելու կանոնների խախտման** (1 դեպք):

**Ենթասպանների** մահվան պատճառ են հանդիսացել

- **առողջական խնդիրները** (1 դեպք),
- **ավտովթարը** (4 դեպք):

**1 կամավորականի** մահվան պատճառ է հանդիսացել

- **ինքնասպանությունը:**

Կարող ենք արձանագրել, որ 2020 թ. ընթացքում **ինքնասպանության** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են վերոնշյալ բոլոր տեսակի ծառայություն իրականացնող զինծառայողների շրջանում, բացի ենթասպաններից:

**Առողջական խնդիրների հետևանքով** մահացության դեպքեր արձանագրվել են վերոնշյալ բոլոր տեսակի ծառայություն իրականացնող զինծառայողների շրջանում, բացի 1 կամավորականի (ինքնասպանության) դեպքից:


**Ավտովթարի հետևանքով** մահացության դեպքեր արձանագրվել են վերոնշյալ բոլոր տեսակի ծառայություն իրականացնող զինծառայողների շրջանում, բացի պահեստազորայիներից և 1 կամավորականի դեպքից:

**Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով** մահացության դեպքեր արձանագրվել են վերոնշյալ բոլոր տեսակի զինծառայողների շրջանում, բացի ենթասպաններից և 1 կամավորականի դեպքից:

**Սպանության հետևանքով** մահացության դեպքեր արձանագրվել են **պարտադիր ժամկետային, պահեստազորային զինծառայողների և սպանների** շրջանում:

Մահացության դեպքերի պատճառների թիվն ըստ զինծառայողների կարգավիճակի առավել մանրամասն ներկայացված է գծապատկեր 2-ում:

**Գծապատկեր 2. 2020 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների ծառայության տեսակն ըստ մահվան պատճառների**



Դիտարկենք մահացության դեպքերն ըստ ամիսների, մահվան պատճառների, զինծառայողների ծառայության տեսակի:

**1. Հունվարին արձանագրված 6 դեպքերի պատճառներն են.**

- **ինքնասպանություն**՝ 2 դեպք, որի հետևանքով մահացել է 1-ական ժամկետային և պայմանագրային զինծառայող,
- **առողջական խնդիրներ**՝ 3 դեպք, որի հետևանքով մահացել են 1-ական ժամկետային, պայմանագրային զինծառայողներ և սպա,
- **դժբախտ պատահար (ընկել է ձորը)**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող:

**2. Փետրվարին արձանագրված 7 դեպքերի պատճառներն են.**

- **ինքնասպանություն**՝ 3 դեպք, որի հետևանքով մահացել է 2 ժամկետային զինծառայող, 1 սպա,
- **առողջական խնդիրներ**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող,
- **դժբախտ պատահար (ձնահյուս)**՝ 3 դեպք, որի հետևանքով մահացել են պայմանագրային զինծառայողներ:

**3. Մարտին արձանագրված 3 դեպքերի պատճառներն են.**

- **ավտովթար**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է սպա,
- **հրադարձի ռեժիմի խախտում**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող,
- **առողջական խնդիրներ**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է սպա:

**4. Ապրիլին արձանագրված 2 դեպքերի պատճառներն են.**

- **սպանություն/ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող,
- **ինքնասպանություն**՝ 1 դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող:

**5. Մայիսին արձանագրված 5 դեպքերի պատճառներն են.**

- **ինքնասպանություն` 1** դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող,
- **առողջական խնդիրներ` 1** դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող,
- **սպանություն/ դիտավորյալ` 1** դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող,
- **դժբախտ պատահար/ հրդեհ մեքենայում` 1** դեպք, որի հետևանքով մահացել է սպա,
- **ականի պայթյուն` 1** դեպք, որի հետևանքով մահացել է սպա:

**6. Հունիսին արձանագրված 9 դեպքերի պատճառներն են.**

- **ինքնասպանություն` 1** դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող,
- **առողջական խնդիրներ` 4** դեպք, որի հետևանքով մահացել են 2 պայմանագրային զինծառայողներ, 1 սպա, 1 ենթասպա,
- **ավտովթար` 3** դեպք, որի հետևանքով մահացել են 1-ական ժամկետայի և պայմանագրային զինծառայողներ և ենթասպա,
- **դժբախտ պատահար/ տրակտորի շրջվելու հետևանքով` 1** դեպք, որի հետևանքով մահացել է 1 պայմանագրային զինծառայող:

**7. Հուլիսին արձանագրված 7 դեպքերի պատճառներն են.**

- **հրադադարի ռեժիմի խախտում` 6** դեպք, որի հետևանքով մահացել են 3 ժամկետային զինծառայող, 3 սպա,
- **ինքնասպանություն` 1** դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող:

**8. Օգոստոսին արձանագրված 12 դեպքերի պատճառներն են.**

- **առողջական խնդիրներ` 4** դեպք, որի հետևանքով մահացել են 2 սպա, 1 պայմանագրային, 1 ժամկետային զինծառայողներ,
- **ավտովթար` 5** դեպք, որի հետևանքով մահացել են 4 պայմանագրային զինծառայող, 1 սպա,
- **դժբախտ պատահար/ տանը շինարարական աշխատանքների ժամանակ մնացել է պատի փլուզման տակ և մեղվի խայթոց` 2** դեպք, որի հետևանքով մահացել են 1 պայմանագրային զինծառայող, 1 սպա,
- **ինքնասպանություն` 1** դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող:

**9. Սեպտեմբերին արձանագրված 7 դեպքերի պատճառներն են.**

- **առողջական խնդիրներ` 4** դեպք, որի հետևանքով մահացել են 4 պայմանագրային զինծառայողներ,
- **հրադադարի ռեժիմի խախտում` 1** դեպք, որի հետևանքով մահացել է սպա,
- **ավտովթար` 1** դեպք, որի հետևանքով մահացել է սպա,
- **դժբախտ պատահար/ թունավորում էթիլ սպիրտով` 1** դեպք, որի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող:

**10. Հոկտեմբերին արձանագրված 12 դեպքերի պատճառներն են.**

- **ավտովթար` 6** դեպք, որի հետևանքով մահացել են 3 պայմանագրային զինծառայողներ, 2 սպա, 1 ենթասպա,
- **ինքնասպանություն` 3** դեպք, որի հետևանքով մահացել են 1-ական ժամկետային, պայմանագրային զինծառայողներ և կամավորական,
- **մարտական հերթապահություն/ ծառայություն կրելու կանոնների խախտում` 2** դեպք, որի հետևանքով մահացել են պահեստազորային զինծառայողներ,
- **զենքի օգտագործման կանոնների խախտում` 1** դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինաձառող:

**11. Նոյեմբերին արձանագրված 9 դեպքերի պատճառներն են.**

- **առողջական խնդիրներ` 4** դեպք, որի հետևանքով մահացել են 2 սպա, 1 պայմանագրային, 1 պահեստազորային զինծառայողներ,
- **ինքնասպանություն` 3** դեպք, որի հետևանքով մահացել են պահեստազորային զինծառայողներ,
- **սպանություն/ դիտավորյալ` 1** դեպք, որի հետևանքով մահացել է սպա,
- **ավտովթար` 1** դեպք, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող:

**12. Դեկտեմբերին արձանագրված 20 դեպքերի պատճառներն են.**

- **հրադադարի ռեժիմի խախտում` 9** դեպք, հետևանքով մահացել են պահեստազորային զինծառայողներ,
- **առողջական խնդիրներ` 3** դեպք, որի հետևանքով մահացել են 2 պայմանագրային, 1 պահեստազորային զինծառայող, 1 սպա,
- **ավտովթար` 4** դեպք, որի հետևանքով մահացել են 2 ենթասպա, 1 սպա, 1 պայմանագրային զինծառայող,
- **ինքնասպանություն` 2** դեպք, որի հետևանքով մահացել են 1-ական ժամկետային և պայմանագրային զինծառայողներ,
- **զենքի օգտագործման կանոնների խախտում` 2** դեպք, որի հետևանքով մահացել են ժամկետային զինաձառողներ:


Կարող ենք արձանագրել, որ **ինքնասպանության** դեպքեր ողջ տարվա ընթացքում գրանցվել են բոլոր ամիսներին, բացի մարտ և սեպտեմբեր ամիսներից:

**Առողջական խնդիրների** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են 2020 թ. բոլոր ամիսներին, բացի ապրիլ, հուլիս, հոկտեմբեր ամիսներից:

**Ավտովթարի** հետևանքով մահացության դեպքերն արձանագրվել են բոլոր ամիսներին, բացի հունվար, փետրվար, ապրիլ և հուլիս ամիսներից:

Մահացության **100** դեպքերից **56**-ը տեղի է ունեցել **ՀՀ** տարածքում, **36**-ը` **ԱՀ/ԼՂ** տարածքում, **8** դեպքի վայրն առայժմ ճշտված չէ (տե՛ս գծապատկեր 3):

**Գծապատկեր 3. 2020 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների թիվն ըստ մահվան դեպքերի տարածքների**



**Չինվորական ծառայության հետ կապված և չկապված դասակարգված մահացության դեպքեր**

**33 զինվորական կենտրոնական** դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրվել է տեղեկատվություն 96 զինծառայողի մահվան դեպքերի վերաբերյալ: Տրամադրած տեղեկատվության համաձայն՝ զինվորական **ծառայության հետ կապված** են համարվել մահացության 96 դեպքից 55 դեպքը, իսկ **չկապված՝ 41-ը**: Դատախազության կողմից չի տեղեկացվել 4 դեպքի մասին, որոնցից 1-ի մասին (ավտովթարի հետևանքով) Կազմակերպությունը տեղեկացել 33 ՊՆ-ից, 2-ի մասին (առողջական խնդիրների հետևանքով)՝ լրատվամիջոցներից, 1 դեպքի մասին (ինքնասպանություն) հայտնի է դարձել պաշտոնական այլ աղբյուրից:

Նշենք, որ Դատախազության կողմից ծառայության հետ չկապված դասակարգված մահացության 41 դեպքերից 12-ում (6-ը՝ առողջական խնդիրների հետևանքով, 3-ը՝ ինքնասպանության, 3-ը՝ դժբախտ պատահարի) զինծառայողները գտնվել են տանը կամ ազատ հերթափոխում, 11 դեպքում զինծառայողները վթարի են ենթարկվել քաղաքացիական/անձնական մեքենայով կամ հանդիսացել են ուղևոր այլ անձի մեքենայում, 8 (առողջական խնդրով) զինծառայողի մահվան դեպքն արձանագրվել է բժշկական կենտրոններում, սակայն հայտնի չէ, թե որտեղից են տեղափոխվել բժշկական կենտրոն՝ տնից, ազատ հերթափոխում գտնվելու վայրից, թե զինծառայության վայրից: Չինծառայության հետ չկապված մահվան 6 դեպքերում (3-ը՝ ավտովթարի հետևանքով, 2-ը՝ դժբախտ պատահարի՝ մեքենայում բռնկված հրդեհի և մեղվի խայթոցի, 1-ը՝ ինքնասպանության) զինծառայողները գտնվել են տարբեր համայնքների վարչական տարածքներում: 4 դեպքում (3-ը՝ առողջական խնդիրների հետևանքով, 1-ը՝ ավտովթարի) հայտնի չէ, թե որտեղ են գտնվել զինծառայողները դեպքի պահին և որտեղ է արձանագրվել վերջիններիս մահը:

**33 քննչական կոմիտեի** կողմից Կազմակերպությանը տրամադրվել են միայն այն 61 զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկություններ, որոնց կապակցությամբ 33 ԶԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է մինչդատական վարույթ: Ի դեպ, 33 ԶԿ կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալներով՝ 61 զինծառայողներից 56-ի մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ կապված, իսկ 5-ը՝ չկապված:

Փաստորեն, ՀՀ զինվորական դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի տվյալները տարբերվում են միմյանցից՝ համապատասխանաբար **96 եւ 61**: Ստացվում է, որ ՀՀ զինվորական դատախազության կողմից ծառայության հետ չկապված դասակարգված 35 դեպքի մասին ՀՀ քննչական կոմիտեի քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում չի իրականացվել մինչդատական վարույթ: Նշված 35 դեպքերի պատճառներն են առողջական խնդիրները (16 դեպք), ավտովթար (11 դեպք), դժբախտ պատահար (4 դեպք), ինքնասպանություն (4 դեպք):

Հիշեցնենք, որ **ՀՀ զինվորական դատախազության կողմից** զինծառայողների մահացության դեպքերը ծառայության հետ կապված կամ չկապված դասակարգելիս «...**հաշվի են առնվում իրադրությունը, դեպքի կոնկրետ հանգամանքները և մահվան պատճառի առնչությունը ծառայողական պարտականությունների կատարման հետ**»:

Իսկ ըստ **ՀՀ քննչական կոմիտեի** կողմից դեպքերը զինվորական ծառայության հետ կապված ու չկապված դասակարգելիս նշվում է՝ «...յուրաքանչյուր դեպքով վարույթն իրակացնող քննիչի կողմից դեպքի հանգամանքների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ ուսումնասիրության և քննության արդյունքում հաստատված փաստական տվյալների հիման վրա է միայն հետևություն արվում՝ զինծառայության հետ մահվան դեպքի կապված լինելու կամ չլինելու հանգամանքը»:

Ինչ վերաբերում է **ՀՀ պաշտպանության նախարարության տվյալներին**, ապա հարկ է նշել, որ Կազմակերպության գրավոր հարցումներին ի պատասխան՝ տրամադրվել է միայն 2020 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ տվյալները, իսկ 2020 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին ընթացքում արձանագրված մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ՀՀ ՊՆ կողմից մերժվել է՝ «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների վկայակոչմամբ, մասնավորապես՝ «...Տեղեկատվություն տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...»:

Այսպիսով, գնահատելով ՀՀ ՊՆ վարքագիծն ու գործելաճը զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հարցում՝ կարելի է նկատել, որ նույնաբովանդակ տեղեկատվության տրամադրումը տարբեր տարիներին ՀՀ ՊՆ կողմից դիտարկվել է տարբեր կերպ, ինչը անհասկանալի է, հանդիսանում է որոշակիության, թափանցիկության եւ հաշվետվողականության սկզբունքների խախտում:

Մասնավորապես՝ 2014 թ. զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ ՀՀ ՊՆ կողմից Կազմակերպության հարցմանը տրամադրվել է միայն թվային տվյալ՝ ըստ մահացության պատճառների:

2015 և 2016 թվականներին ՊՆ կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել է՝ համարելով այն պետական և ծառայողական գաղտնիք համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջների հիման վրա ՀՀ ՊՆ 09.07.2015 թ. N 9-Ն հրամանով հաստատված «ՀՀ պաշտպանության համակարգի

գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի» 42-րդ և 43-րդ հոդվածների:

2017 թ. ՀՀ ՊՆ կողմից տեղեկացվել է, որ զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ՔԿ կամ ՀՀ զինվորական դատախազություն:

2018 և 2019 թվականներին ՀՀ ՊՆ կողմից տրամադրվել է տեղեկատվություն ըստ մահացած զինծառայողների անունների, այնուամենայնիվ, զինծառայողների մահացության պատճառների մասին տեղեկանալու համար ՀՀ ՊՆ կողմից խորհուրդ է տրվել դիմել ՀՀ քննչական կոմիտե:

Ինչ վերաբերում է 2020 թ.-ին, ապա առաջին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ՊՆ կողմից տրամադրվել է ըստ անունների՝ չմանրամասնելով պատճառները: Մինչդեռ 2020 թ. երկրորդ կիսամյակում մահացության բոլոր, այդ թվում՝ պատերազմական գործողությունների հետևանքով դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվել է՝ համարելով այն ՀՀ ՊՆ համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկատվություն, այն դեպքում, երբ լրատվամիջոցներից մեկի նույնաբովանդակ հարցմանը՝ պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի թվի վերաբերյալ, տրամադրվել է պատասխան<sup>5</sup>:

**Աղյուսակ 3. 2020 թ. ընթացքում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի թիվն ըստ պաշտոնական աղբյուրների**

<i>Պաշտպանության նախարարություն /2020 թ. հունվար-հունիս/</i>	<i>Դատախազություն</i>	<i>Քննչական կոմիտե</i>
31	96	61

### **2020 թ. զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների**

Ըստ առկա՝ պաշտոնապես և ՉԼՄ-ներով տարածված տվյալների, 2020 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության **100 դեպքերից 63-ի փաստով հարուցվել են քրեական գործեր** հետևյալ հոդվածներով.

- **13-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

<sup>5</sup> <https://armeniasputnik.am/armenia/20210405/27062450/pn-n-zoheri-tiv-e-tramdrel-pashinyani-haytnats-tyvalneri-het-dranq-chen-hamapatasxanum.html>

- **9-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը,

- **6-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ

- **6-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ,

- **3-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածներով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ, ինչպես նաև պաշտոնատար անձի կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձանց,

- **3-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանությունն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

- **3-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

- **3-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ,

- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը,

- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածներով՝ 373-րդ հոդվածի 4-րդ մասով և 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ, ինչպես նաև անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, թե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ,



- **2-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում<sup>6</sup>,

- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ սպանություն՝ խուլիգանական դրդումներով<sup>7</sup>

- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 34.104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետով՝ երկու կամ ավելի անձանց սպանության փորձ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 34.104-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանության փորձ, ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը

- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 1-ին մասով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից

- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 3-րդ մասով՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, զինծառայողին սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական պատիվն ու արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու միջոցով անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում,

